

ուաջաբան: Պ. Մկր. Բարխուդարեանը սուսերէնից թարգմանել է և՛ այդ յառաջաբանը, և՛ «Վարդապետ» հատուածը:

Գրքոյկի բովանդակութիւնը ընդհանրապէս շատ հետաքրքրական է, բայց առանձնապէս հետաքրքրական է կոյս Սեֆերօյիչի տիպը, որ կարող է լաւ նիւթ առ մի գեղեցիկ պատմական վէպի կամ դրամայի համար:

Սեֆերօյիչ կոյսը իր խելքի և երկաթէ ընաւորութեան չընորհիւ կարողանում է մեն-մենակ մաքառել այնպիսի անուկի հակառակորդներէ դէմ, ինչպէս են եղութաները, որոնց համար միշտ աչքի փուշ է եղել հայ եկեղեցու ինքնուրոյնութիւնը և հայերի հաւատարմութիւնը իրանց ազգային եկեղեցուն:

S. 6.

Памятная книжка Эриванскоѣ губерніи на 1902 годъ. Зримо. Երևանի նահանգական ստատիստ. կոմիտ.

Հրատարակութիւնը մի ամիտի գաղափար է տալիս Երևանեան նահանգի մասին:

Երևանեան նահանգը՝ ինչպէս յայտնի է՝ անցաւ ուսաց ձեռքը 1828 թ. համաձայն Թիւրքմէնչայի դաշնագրի: Կազմուելով Նախիջևանի և Երևանի խանութիւններից՝ նա սկզբում կոչուեց Հայկական նահանգ: Այս մասը ուսումնասիրութեան ենթարկուել է առաջին անգամ 1829 թ. Շոպէնի ձեռքով Պասկիչի կարգադրութեամբ: Այս ուսումնասիրութեան արդիւնքն էր «Историческій памятникъ состоянія Армянскоѣ области въ эпоху присоединенія ея къ Россіи», որը այժմ շատ հազուադիւս մի աշխատութիւն է դարձել: 1856 թ. Հայկական նահանգը անուանուեց Երևանեան նահանգ, ինչ անունով որ նա կոչուում է մինչև այժմ:

Աւելի քան 476 երևաներից բաղկացած այս հրատարակութեան առաջին մասը (100 երես) բռնում է ուսաց, հայոց և հոսվմէական օրացոյցները և զանազան հիմնարկութիւնների ու պաշտօնական անձերի ցուցակը, որոնք շատ քիչ առնչութիւն ունեն հրատարակութեան բուն նպատակի հետ:

Երկրորդ մասից միայն սկսւում են վիճակագրական տեղեկութիւնները, որոնցից երկուսն է, որ Երևանեան նահանգը բաղկացած է եօթ, այն է՝ Երևանի, Ալէքսանդրօպօլի, Նախիջևանի, Շարուր-Պարալազեազի, Նոր-Բայազէթի, Սուբասուրի և Էջմիածնի գաւառներից իրանց 25 գաւառամասերով, 110 զիւզական հասարակութիւններով և 1334 զիւղերով: 1886 թ. Վիճակագրութեամբ նահանգի ընակիչների թիւը եղել է արական

սեռից 365,746 և իգական սեռից 311,708, ընդամենը 677,454, այն ինչ՝ 1897 թ. միօրեայ ընդհանուր վիճակագրութեամբ նրանց թիւը հասել է արական սեռից 429,689, իգական սեռից 375,068, ընդամենը 804,756, ասել է՝ 11 տարուայ ընթացքում ազգաբնակչութիւնը աճել է 18%<sup>0</sup>-ով աւելի:

Այս մասում մի առանձին ցուցակ տալիս է նահանգի ուսողման պատկերը: Իւրաքանչիւր ջրաբաշխական շրջան իր ակունքներով ու գետերով և նրանց շրջանում գտնուող գիւղերի ցուցակներով առաջ են բերուած մէկիկ-մէկիկ, որից նկատելի է, որ նահանգում հաշոււմ է 16 ուսողման շրջաններ իրանց ջրբաշխաններով (միրաբ-ղայքէկի), որոնք ձգուած են գլխաւորապէս դաշտային մասերում, այն է՝ Երևանի, Շարուր-Դարալագեազի, Լջվիածնի և Նախիջևանի գաւառներում:

Գրքի երրորդ մասում ամբողջ 100 կրեսների վրայ առաջ է բերուած 1300-ից աւելի գիւղերի մանրամասն ցուցակն իրանց շրջաններով և գաւառաբաժիններով առանձին-առանձին:

Այս մասը այնքան հետաքրքրութիւն է ներկայացնում, որ իւրաքանչիւր ժողովրդի կեանքով հետաքրքրուող անձ մեծ բաւակնութեամբ թերթում է այն անվերջ ցանկը, որտեղ իւրաքանչիւր գիւղի անուան գիմաց առանձին սխեմակներում առաջ են բերուած ծխերի թիւը, գիւղական այլևայլ ծախքերի, ջրբաշխանների և ջրբաժանների, ուսումնարանների պահպանութեան և վերջապէս ճանապարհների ու առուների ծախքերի չափը: Բերուած են նոյնպէս իւրաքանչիւր գիւղի ունեցած հողերի, նրանց բերած եկամտի, ինչպէս և՛ հարկերի քանակը 1900 թ. ընթացքում:

Այսպէս օրինակ՝ ամբողջ նահանգում հաշոււմ է 1,280,094 գետնատին հող 9,080,222 բուբլի եկամտով, որից վերցնոււմ են պետական հարկ 570,395 բուբլի, տեղական աղմինխտրայի պահպանութեան համար 400,599 բ. և տեղական ծախքեր 290,824 բ., ընդամենը 1,261,818 բ.:

Այս մասում առաջ է բերուած 1900 թ. իւրաքանչիւր բերքի համար պարապեցրած տարածութիւնը, բերքի քանակը և արժէքը ջուկ-ջուկ, որը ցոյց է տալիս, թէ ինչ բերք ինչ չափով է զարգացած եղել և իր բունած տարածութեամբ ու արժէքով որքան չահաւէտ ժողովրդի համար:

Ահա այդ ցանկը.

	ցանուած է եղել	բերք է ստացուել	արժէքը	
	դեսնատին	четверть (6 փութ)	ր.	կ.
Ցորեն	166,154	1,785,724	12,462, 00	
Գարի	58,586	505,834	1,748,000	
Բրինձ	8,737	2,308,072	2,886,000	
Կարտոֆիլ	4,252	30,032	96,000	
Բամբակ	15,257	382,035	3,606,000	
Խաղող	10,298	2,047,211	1,024,000	
Պտուղներ	2,868	104,707	209,000	
Խոտ		11,620,000	2,888,000	

24,919,000

Եթէ այս բերքերի եկամտի վրայ աւելացնենք նաև մի քանի այլ աղբիւրներից ստացուած եկամուտը, այն է՝

Ընտանադահուիթիւնից . . . . .	1,157,000
Բեռնակրուիթիւնից . . . . .	452,000
Գործարանական արդիւնքներից . . . . .	1,337,000
Զեռագործ արհեստներից . . . . .	399,000

3,345,000

Բոլորը միասին կը լինի 28,264,000: Նշանակում է Երևանեան նահանգի 1900 թւի բերքը վերածելով գրամի՝ հաւասար է եղել 28,264,000, որը եթէ բաժանենք ընտելիչների՝ այն է՝ 804,756 հոգու վրայ, կը ստանանք 35 ր. 10 կ. իւրաքանչիւր հոգու համար, զեռ չը հաշւած վճարելիք հարկերը և նահանգում եղող 1,157,000 կենդանիների ուտեստը:

Այս մասում առաջ է բերուած նաև եկեղեցիների և մրդկիթների ցանկը լամբողջ նահանգում, որից երևում է, որ ուսներն ունեն 26 եկեղեցի, 2 աղօթատուն, հայերը 470 եկեղեցի, 28 վանքեր, իսկ թուրքերը 310 մզկիթներ: Ընդամենը 836 աղօթատեղիներ:

Չորրորդ բաժինը, որը կազմում է գրքի  $\frac{2}{5}$  մասը, նուիրուած է ամբողջովին նահանգի ֆեզիկական տեղագրական նրկարագրութեան—սահմանների, լեռների, հարթութիւնների, գետերի, լճերի, հանքերի, հանքային աղբիւրների և այլն: Մեծ տեղ են գրաւում նաև արօտատեղիները իրանց գրաւիչ և հմայող ստեարաններով, հողագործութեան ձիւղերով, մշակութեան ձևերով և այժմ գործածական գործիքների յիշատակութեամբ, այգեգործութեան, պինդգործութեան, բրնձի մշակութեան, և վերջապէս բամբակագործութեան նուիրուած երեսները: Այժմ բամբակագործութիւնը՝ ինչպէս երևում է՝ Երևանի նահանգում

գոյութիւն է ունեցել շատ հին ժամանակներից: Այսպէս՝ ուսաները 1827 թւին տիրելով Երեանին՝ դտան մասնաւոր հողատէրերի մօտ և Հուսէին-խան Սարգարի ամբարներու՝ որպէս տասնորդ հարկ՝ բաւական քանակութեամբ բամբակ, բայց չընորհիւ մշակման ընկած գրութեան՝ այդ բերքը չէր արտահանուում մեծ չափով մինչև 1884 թիւը՝ երբ մեղանում մուտք գործեցին Ռուսաստանի յայտնի ֆերմաներ՝ իրանց հետ բերելով ամերիկական տեսակի սերմը, որից յետոյ բամբակագործութիւնը արագ կերպով առաջ գնաց՝ այժմ կազմելով արտահանութեան առաջին ճիւղը, արտադրելով կէս միլլիօն պուզից աւելի բամբակ:

Բայի այդ եթէ ի նկատի առնենք մի շարք տեղեկութիւններ գորգագործութեան կրթական գործի և այդգործական ու բանջարաբուծութեան, մասին մասնաւորապէս մի երկու մասերում, կը տեսնենք, որ գրքի այս մասը իր բազմակողմանի և ընդարձակ տեղեկութիւններով մի ամփոփ գաղափար է տալիս մեր նահանգի մասին:

Գրքի հինգերորդ մասը նուիրուած է նահանգում գրտնուած սեպագծն արձանագրութիւններին և պատմական հնութիւններին՝ վերջրած Մ. Վ. Նիկոլսկու «Клинообразныя надписи Закавказья» աշխատութիւնից: Այս մասում բաւականին մանրամասն առաջ են բերուած Դաշրուսունի և Արմաիրի շրջաններում եղող արձանագրութիւնները, որոնցից առաջինը ընկած է Սուբմալուի, իսկ երկրորդը Էջմիածնի դաւաններում:

Այստեղ պատմական հնութիւններից ի միջի այլոց յիշուած են Էջմիածինն ու Խորվիրապը որպէս ամենահին սըրբավայրեր, որոնք գոյութիւն ունեն Գրիգոր Լուսաւորչի օրերից:

Գրքի վերջում կցուած է Երեանեան նահանգի էսնօզրաֆիական բաւականին լաւ կազմուած քարտէզը:

Այս հրատարակութեան կարեւորութիւնը ի նկատի առած՝ շատ ցանկալի էր հրատարակուած տեսնել նաև միւս երկու մասերը, որոնք նուիրուելու են յատկապէս ժողովրդի նիստ ու կացին, համայնական կարգերին, սովորութիւններին ու հաւատալիքներին, մի խօսքով նրա ամբողջ կենցաղին: